ԼԳԲՏ ԱՆՁԱՆԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Տարեկան զեկույց
Հայաստան 2014

Տարեկան զեկույց. ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակը Հայաստանում, 2014թ.

Կազմվել է Հայաստանում (մայիս, 2015թ.)
Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ-ի կողմից՝
Ջիգրիդ Ռաուզինգ Թրասի ֆինանսական աջակցությամբ

Ներածություն

ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքը Հայաստանում շարունակվում է համատարած բնույթ կրել, և պետությունը որևէ քայլ չի ձեռնարկում նրանց նկատմամբ բացասական վերաբերմունքը նվազեցնելու և իրավունքները պաշտպանելու համար: Դեռ հակառակը, իշխող կուսակցության անդամները, պետական պաշտոնյաները և իշխանությանը կից լրատվամիջոցները չեն դադարում ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության կոչերով հանդես գալ, որը ամրապնդում է երկրում անպատժելիության մթնոլորտը:

ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների խախտումներին մեծապես նպաստում է խտրականությունն արգելող օրենսդրության և խտրականության համար պատասխանատվության մեխանիզմների բացակայությունը, ինչպես նաև գործող օրենսդրական դաշտի անկատարությունը, որը ԼԳԲՏ անձանց ավելի խոցելի է դարձնում:

Ավելին, խտրականությունն արգելող իրավական մեխանիզմների, ինչպես նաև ընդհանուր քաղաքականության բացակայությունը նպաստում է ԼԳԲՏ անձանց նկատմամբ կատարվող հանցագործությունների ոչ պատշաճ որակմանը, քննությանը և մեղավոր անձանց պատասխանատվությանը, քանի որ անձի նկատմամբ հանցագործությունը նրա սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով չի պաշտպանվում ՀՀ օրենսդրությամբ:

ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության խոսքն արգելող օրենսդրության բացակայությունն էլ ավելի է ամրապնդել պետական մարմինների ներկայացուցիչների, հանրության հեղինակությունը վայելող անձանց, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների կողմից ատելություն քարոզող հայտարարություններով հանդես գալու հնարավորությունը՝ այն ներկայացնելով խոսքի ազատության համատեքստում:

ՀՀ Սահմանադրության 14 հոդվածով պետությունը պարտավորված է հարգել և պաշտպանել մարդու արժանապատվությունը, իսկ 14-րդ հոդվածի առաջին կետի համաձայն, խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

2014թ. ԼԳԲՏ անձանց դեմ ատելության կոչերը հատկապես ակտիվացան Եվրատեսիլ մրցույթում մորուքով ու կանացի զգեստով ներկայացող ավստրիացի երգիչ Կոնչիտա Վուրստի մասնակցության հետևանքով: Թե՛ հասարակության, թե՛ իշխանության և թե՛ շոու բիզնեսի մակարդակով սկսեցին քարկոծել ավստրիացուն, ինչը հետագայում վերաճեց Հայաստանում ԼԳԲՏ անձանց դեմ արշավի և ԼԳԲՏ իրավապաշտպանների հետապնդման:

ԼԳԲՏ անձինք խուսափում են իրենց բողոքները պետական մարմիններին հայտնել և ապավինում են հասարակական կազմակերպություններին:

Սույն զեկույցն ամփոփում է «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ի (առավել հայտնի որպես ՓԻՆՔ Արմենիա) 2014թ. արձանագրած և փաստաթղթավորած դեպքերը, ԼԳԲՏ անձանց հետ իրականացված հարցազրույցների արձանագրությունները, դատական գործերի, համացանցի և այլ զեկույցների ուսումնասիրություններից ստացված տվյալները: 2014թ. իրավունքների ոտնահարման հարցով «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ է դիմել 44 մարդ, որոնց իրավունքի խախտումների դեպքերն այս կամ այն կերպով կապված են դիմողների սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հետ: Զեկույցում ցույց է տրվում, թե ԼԳԲՏ անձանց հետ

փոխհարաբերություններում ինչ խախտումներ է կատարել պետությունը, իրավունքների ոտնահարման ինչպիսի բնույթի դեպքեր են արձանագրվել 3-րդ կողմի անձանց հետ փոխհարաբերություններում ու թե բոլորի համար հավասար հնարավորություններ ստեղծելու պետության ձախողումը ինչ իրադրության է հանգեցրել:

Զեկույցում ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարման դեպքերը ներկայացված են հետևյալ կառուցվածքով.

1. Մարդու իրավունքների այն հիմնական դրույթները, որոնք խախտվել են արձանագրված դեպքերի պարագայում, իրավունքների սահմանումները, ինչպես նաև տվյալ իրավունքների սահմանադրական և օրենսդրական կարգավորումները:
2. Կոնկրետ իրավունքների ոտնահարումներին առնչվող արձանագրված դեպքերի ընդհանուր նկարագրությունը:

Զեկույցի վերջում զետեղված են «Հանրային տեղեկավություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ի առաջարկությունները պետական մարմիններին, զանգվածային լրատվության միջոցներին միջազգային և տարածաշրջանայինկազմակերպություններին, որոնց իրականացումը հնարավորություն կտա հասարակությունում ստեղծել ապահով միջավայր ԼԳԲՏ անձանց համար, որտեղ ԼԳԲՏ անձինք հանդես կգան որպես հասարակության լիիրավ անդամներ և հնարավորություն կունենան արդյունավետ կերպով իրացնելու իրենց իրավունքները և ազատությունները:

1. Մարդու իրավունքները հարգելու պետության պարտականությունը

1.1. Խոշտանգումներից կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից ազատ լինելու իրավունք

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք[1]:

Հոդված 17, մաս 1, ՀՀ Սահմանադրություն

Խոշտանգումը ցանկացած գործողություն է, որի միջոցով պետական պաշտոնյա անձը կամ պաշտոնապես հանդես եկող այլ մարդ, կամ նրանց հրահրմամբ և գիտությամբ կամ լռելյայն համաձայնությամբ, որևէ անձի մտածված կերպով հասցնում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ մարմնական կամ մտավոր, նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, իր կամ երրորդ անձի կատարած հանցանքի կամ այն գործած լինելու մեջ կասկածելու համար, ինչպես նաև նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ամեն մի այլ պատճառով: Այս բնորոշման մեջ չեն մտնում այն ցավն ու տառապանքը, որոնք ծագում են սոսկ օրինական սանկցիաների պատճառով, անբաժանելի են այդ սանկցիաներից կամ ծագել են դրանցից՝ պատահականորեն[2]:

Խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից ազատ լինելը անձի բացարձակ իրավունք է և ենթակա չէ սահմանափակմա[3]: Որպեսզի դաժան վերաբերմունքն առաջացնի անձի վերոհիշյալ իրավունքի խախտում, անհրաժեշտ է, որպեսզի այն հասնի դաժանության նվազագույն մակարդակի, պետք է հաշվի առնվեն նաև կոնկրետ գործի հանգամանքները, ինչպես, օրինակ, վերաբերմունքի բնույթը, թե ինչ համատեքստում է այն տեղի ունեցել, դրա տևողությունը, ֆիզիկական և հոգեբանական հետևանքները, իսկ որոշ դեպքերում նաև անձի տարիքը, սեռը և առողջական վիճակը[4]: Անհրաժեշտ է տարբերակել խոշտանգումը անմարդկային վերաբերմունքից, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից, որտեղ խոշտանգումը անձին դիտավորությամբ պատճառված այն վնասն է, որը պատճառել է շատ լուրջ և դաժան տառապանք, մինչդեռ նվաստացնող վերաբերմունք կարող է համարվել այն վերաբերմունքը, որ անձի մոտ առաջացնում է վախի, վտանգի, ստորացված լինելու զգացողություններ[5], իջեցնում է անձի հեղինակությունը և դերը, մարդկային արժանապատվությունը կամ ստիպում է անձին գործել իր կամքին կամ խղճին հակառակ[6]: Որոշ դեպքերում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունը, սպառնալիքները, նույնպես նվաստացնող վերաբերմունք են համարվում[7]: Այս դեպքերում անհրաժեշտ չէ պետության կողմից դիտավորության առկայությունը անձի անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրավունքի խախտման փաստը ճանաչելու համար[8]:

---

[1] Հոդված 17, մաս 1, ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ընդունված 27.11.2005թ.

[2] Հոդված 1, «Խոշտանգումների եւ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձեւերի դեմ» ՄԱԿ-ի 1984թ. կոնվենցիա

[3] Փրեթթին ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ Թիվ 2346/02 վճիռ, §49

[4] Փրայսն ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ ԹԻՎ 33394/96 վճիռ, Կոստելլո-Ռոբերթսն ընդդեմ Միացյալ Թագավորության Թիվ 13134/87 ՄԻԵԴ վճիռ, §30

[5] Այդինն ընդդեմ Թուրքիայի Թիվ 23178/94 ՄԻԵԴ վճիռ

[6] Արևելյան աֆրիկյան ասիացիներն ընդդեմ Միացյալ Թագավորության Թիվ ՄԻԵԴ 4715/70, 4783/71 և 4827/71 գործերով

[7] Սմիթը և Գրեդին ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ Թիվ 33985/96 և 33986/96 գործեր

[8] Փիրսն ընդդեմ Հունաստանի Թիվ 28524/95 ՄԻԵԴ վճիռ, ինչպես նաև Խոշտանգումների եւ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձեւերի հարցերով ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողի U.N. Doc. No. A/56/156 2001թ. զեկույց փաստաթուղթ

ԼԳԲՏ անձանց իրավիճակը Քրեակատարողական հիմնարկներում

ԼԳԲՏ անձանց կյանքը հատկապես ծանր է փակ հաստատություններում (ՔԿՀ-ներ, զինված ուժեր), որտեղ բացի բացասական վերաբերմունքից՝ նրանց հետ վարվելու կոնկրետ կանոններ են սահմանված: Մի քանի տարի է այդ հարցը բարձրացվում է, սակայն իրավիճակը նույնն է մնացել:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2013թ. գործունեության մասին զեկույցում[9] նշվում է, որ ՔԿՀ-ներում ամենախոցելի խումբը նույնասեռականներն են, նրանք առանձնացված են մյուս դատապարտյալներից ու նրանց հարկադրաբար օգտագործում են ամենանվաստացուցիչ համարվող աշխատանքներում՝ կոյուղու, զուգարանի, բաղնիքի մաքրման գործերում:

1.2 Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

> *Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը: Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով[10]:…*
>
> *Հոդված 23, մաս 1, ՀՀ Սահմանադրություն*

Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը սահմանում է յուրաքանչյուր անձի օրենքի առջև իրավասուբյեկտության ճանաչման, ինչպես նաև գաղտնիության իրավունքը[11]: Այն ներառում է պետության պարտականությունը ճանաչելու անձի կողմից ընդունված իր սեռը և գենդերային ինքնությունը`[12] որպես անձի կողմից անձնական կյանքի իրավունքի իրականացման ապահովում:

«Անձնական կյանքը» լայն հասկացություն է, ներառում է անձի ֆիզիկական և հոգեբանական ամբողջությունը: Որոշ դեպքերում այն ընդգրկում է նաև անձի ֆիզիկական և սոցիալական ինքնության ասպեկտները: Այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են, օրինակ, անձի գենդերային նույնականացումը, անունը, սեռական կողմնորոշումը և սեռական կյանքը, տեղավորվում են մարդու անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի պաշտպանության համատեքստում[13]: Անձի մարմինը իր անձնական կյանքի առավել ինտիմ բաղադրիչն է համարվում[14]:

Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը նաև նախատեսում է անձի ինքնազարգացման, այլ անձանց հետ կապերի հաստատման և զարգացման հնարավորության ապահովման իրավունքը[15], անձնական հարաբերությունների արդյունավետ իրացման, տվյալ հանրույթում ապահով միջավայր ունենալու իրավունքը[16]:

---

[9] ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն հասարակական դիտորդական խմբի 2013թ. գործունեության հաշվետվություն, էջ 15-16, http://pmg.am/wp-content/uploads/2015/01/2013_report.pdf
[10] հոդված 23, մաս 1, ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ընդունված 27.11.2005թ.
[11] հոդված16, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ 1966թ. միջազգային դաշնագիր
[12] հոդվածներ 16 և17 «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ 1966թ. միջազգային դաշնագիր, ՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն 16
[13] Փրեթթին ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ Թիվ 2346/02 վճիռ, §49
[14] Y.F. ընդդեմԹուրքիայի Թիվ 24209/94 ՄԻԵԴ վճիռ
[15] Y.F. ընդդեմԹուրքիայի Թիվ 24209/94 ՄԻԵԴ վճիռ
[16] Քոննորսն ընդդեմ Միացյալ Թագավորության Թիվ 66746/01 ՄԻԵԴ վճիռ

Զինվորական ծառայությանն առնչվող դեպքեր

Մարտի 24-ին «News.am»-ը «Ծառայությունից խուսափելու համար զինվորը նույնասեռական է ներկայացել. նախաքննություն» վերնագրով հոդված էր հրապարակել[17], որի համաձայն Գառնիկ Մ. անունով զինծառայողը ծառայությունից խուսափելու համար հրամանատարներին և ծառայակիցներին ստել է, թե նույնասեռական է, ինչի համար տեղափոխվել է պաշտպանության նախարարության Երևանի կայազորային զինվորական հոսպիտալի հոգեբուժական բաժանմունք: Նրա դեմ մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 363 հոդվածով:

Նմանօրինակ դեպք է գրանցվել ՓԻՆՔ Արմենիայում: 4-5 ամիս ՀՀ Զինված ուժերում ծառայած անձի դեմ քրեական գործ է հարուցվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 363-ի հատկանիշներով՝ հիվանդության սիմուլյացիա՝ անօրինական ճանապարհով զինվորական ծառայությունից խուսափելու համար: Զորամասում, նրա սեռական կողմնորոշումը պարզելուց հետո, վերջինիս ուղարկել են տեղի բուժկետ, այնուհետև Սիսիանի հոսպիտալ՝ հետազոտելու, ինչի արդյունքում արձանագրել են, որ նա ստում է և նույնասեռական չէ:

Նույնասեռականությունը հոգեկան հիվանդություն համարելով՝ Պաշտպանության նախարարությունը նույնասեռականներին զինվորական ծառայության չի զորակոչում, եթե սեռական կողմնորոշման մասին հայտնի է դառնում մինչև զորակոչվելը: ՓԻՆՔ Արմենիայում դեպք է գրանցվել, երբ անձին չի տրամադրվել վարորդական վկայական, քանի որ վերջինս զինվորական ծառայության գրքույկում ճանաչվել է ոչ պիտանի՝ պայմանավորված անձնային խանգարումներով, ինչն ախտորոշվել էր՝ հիմք ընդունելով անձի սեռական կողմնորոշումը:

Կազմակերպությունում մեկ այլ գրանցված դեպքով զինծառայողի սեռական կողմնորոշման մասին հայտնի է դարձել զորամասում, այնուհետ՝ զինկոմիսարիատում, ինչի առիթով անձին ազատել են զինվորական ծառայությունից՝ ծառայության անցնելուց վեց ամիս հետո: Այս կապակցությամբ գյուղապետը, ով զինկոմիսարիատից տեղեկացել է անձի սեռական կողմնորոշման մասին, տղայի հորը հայտնել է, թե ինչ հիմքով է տղան ազատվել բանակից:

ՓԻՆՔ Արմենիան ևս մեկ դեպքով զինկոմիսարիատի աշխատակիցն է հարևանին հայտնել, որ վերջինիս որդին նույնասեռական է և բանակից ազատվել է հենց սեռական կողմնորոշման հիմքով:

Վերը նշված նմանօրինակ դեպքերից մեկին միջամտելու համար սպառնալիքներ են հասցվել ՓԻՆՔ Արմենիայի աշխատակցին: Զինծառայողը դիմել էր ՓԻՆՔ Արմենիա այն բանի համար, որ զորամասում բացահայտվել է իր նույնասեռական լինելը, ինչի համար նրան ֆիզիկական և հոգեբանական բռնությունների են ենթարկել: Կազմակերպությունում խորհուրդ էին տվել այդ մասին տեղեկացնել հրամանատարությանը:

Տղայի անվտանգության նկատառումներից ելնելով՝ հրամանատարությունը նրան տեղափոխել է այլ վայր՝ ծառայությունը շարունակելու, իսկ կատարվածի մասին հայտնել են տղայի ծնողներին և նրանց փոխանցել ՓԻՆՔ Արմենիայի թեժ գծի համարը: Արդյունքում ծնողները շարունակաբար զանգել են վիրավորանքներ ուղղել ՓԻՆՔ Արմենիայի աշխատակցի հասցեին, մեղադրել են, որ կազմակերպության պատճառով է իրենց որդին նույնասեռական դարձել: Տղայի հայրը ասել է. «Ազատամարտիկ եմ և նախագահի կողմից մեդալ եմ ստացել մարդ սպանելու համար: Հիմա մի հոգի ավել, մի հոգի պակաս, հասցեդ ասա՝ գալու եմ սպանեմ քեզ»:

[17] Ծառայությունից խուսափելու համար զինվորը ներկայացել է նույնասեռական. նախաքննություն, http://news.am/arm/news/200784.html, 26.03.2014

Դրանից հետո ՓԻՆՔ Արմենիայի փաստաբանն է զանգել, զրուցել է ընտանիքի անդամների հետ, բացատրել դրությունն, ինչից հետո սպառնալիքները դադարել են, իսկ տղան բարեհաջող ավարտել է ծառայությունն ու վերադարձել տուն:

1.3. Արդարադատության մատչելիության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք

> *Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք[18]:...*
>
> *Հոդված 18, մաս 1, ՀՀ Սահմանադրություն*

Արդարադատության մատչելիությունը և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու օրինական շահերի խախտման դեպքում կարող է վերականգնել դրանք: Սա նշանակում է, որ կոնկրետ իրավունքի պաշտպանություն նախատեսող իրավական դրույթը պետք է հնարավոր դարձնի անձի կողմից ներկայացված համապատասխան դիմումի քննությունը[19]: Պաշտպանության միջոցը պետք է լինի «պրակտիկ և արդյունավետ», և դրա իրականացումը չպետք է խոչընդոտվի պետական մարմինների որոշակի գործողությամբ կամ անգործությամբ[20]: Պաշտպանության միջոցը պետք է լինի արդյունավետ և հասանելի լինի թե՛ օրենսդրությամբ սահմանված կարգով և թե՛ գործնականում[21]: Պետությունն առավել մեծ պարտականություն ունի ապահովելու արդարադատության մատչելիությունն այն մարդկանց համար, ովքեր առավել խոցելի են իրավունքի պաշտպանության տեսանկյունից[22]: Այն դեպքում, երբ անձի նկատմամբ իրավունքի խախտումները տեղի են ունենում նրա սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով, պետությունը պետք է ապահովի նման միջադեպերի արդյունավետ, արագ և անկողմնակալ քննությունը[23], ինչպես նաև որպես ծանրացնող հանգամանք սահմանի նման հիմքով անձի նկատմամբ ցանկացած ոտնձգություն որպես ատելության հիմքով կատարված ոչ իրավաչափ արարք[24]:

ԼԳԲՏ անձանց նկատմամբ ոստիկանության վերաբերմունքը

Տրանսգենդեր Լ. Կ.-ի դեպքը

2014թ. Սախարովի հրապարակի մոտ 5 հոգի հարձակվել են տրանսգենդեր «Լ. Կ.» անունով տրանսգենդերի վրա ու ծեծել նրան: Վերջինիս պատմելով՝ նա դիմել է ոստիկանություն, սակայն իրավապահները հայտնել են, որ Կարմենը մարմնավաճառ է ու պետք է տուգանեն նրան: Իսկ ծեծի հետ կապված գործը մինչ օրս չի բացահայտվել:

Կ.-ին փողոցում սկսել են ճանաչել այն բանից հետո, երբ նա մասնցակցել է «Արմնյուզ» հեռուստաընկերության «Երևանն է խոսում» հաղորդմանը[25]: Կ.-ի խոսքերով, անվտանգության նկատառումներից ելնելով՝ նրան առաջարկել էին հաղորդմանը մասնակցել

[18] հոդված 18, մաս 1, ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ընդունված 27.11.2005թ.
[19] Քուդլան ընդդեմ Լեհաստանի Թիվ 30210/96 ՄԻԵԴ վճիռ
[20] Աքսոյն ընդդեմ Թուրքիայի Թիվ 21987/93 վճիռ.
[21] Քուդլան ընդդեմ Լեհաստանի Թիվ 30210/96 ՄԻԵԴ վճիռ
[22] Այդինն ընդդեմ Թուրքիայի Թիվ 23178/94 ՄԻԵԴ վճիռ
[23] Եվրոպայի Խորհրդի CM/Rec(2010)5 «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դեմ պայքարի միջոցների վերաբերյալ» հանձնարարական
[24] Եվրոպայի Խորհրդի CM/Rec(2010)5 «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դեմ պայքարի միջոցների վերաբերյալ» հանձնարարական
[25] Երևանն է խոսում, Արմնյուզ լրատվական հեռուստաալիք, https://youtu.be/gXigNRgOAks, 03.02.2014

կեղծամով, որը պետք է թաքցներ նրա դեմքը: Սակայն նկարահանումները սկսելու ժամանակ պահանջել են հանել կեղծամը՝ հաղորդմանը նպատակահարմար չհամարելով: Հաղորդման մյուս 5 մասնակիցները քննադատել են Կ.-ին, առաջարկել բուժվել և կոչեր են հնչել պայքարել նման երևույթի դեմ:

Կ.-ը պատմում է, որ հաղորդումից հետո դրսում նրան ճանաչում ու հայհոյում են: Նա ամբողջովին կորցրել է կապը ընտանիքի հետ: Քույրը, որի հետ նա բնակվում էր ընտանիքի առջև իր ինքնությունը բացահայտելուց հետո, նրան նույնպես դուրս է հանել տնից: Ռեստորանում, որտեղ նա աշխատում էր, Կ.-ի խոսքերի համաձայն, տնօրենն իրեն հեռացրել է աշխատանքից՝ ասելով, որ հաճախորդները ճանաչում են նրան ու այդպիսով նա փչացնում է իրենց աշխատանքը, ինչպես նաև, վերջինիս պնդմամբ, տնօրենը չի վճարել վերջին օրվա աշխատավարձը:

Ոստիկանություն ներկայացված դիմումների քննությանն առնչվող ՓԻՆՔ Արմենիայում արձանագրված դեպքերը

ՓԻՆՔ Արմենիայում արձանագրված դեպքի համաձայն, տրանսգենդեր անձը ներքաշվել է ծեծկռտուքի մեջ Մանկական այգու (Կոմայգի) տարածքում երկու կին մարմնավաճառների հետ, որից հետո ներկայացել է ոստիկանություն՝ իր նկատմամբ ծեծի վերաբերյալ բողոք ներկայացնելու համար: Կին մարմնավաճառները նույնպես բողոք են ներկայացրել իրենց նկատմամբ ֆիզիկական բռնություն կիրառելու հիմքով: Ապացույցների բացակայության առիթով քրեական գործ է հարուցվել տրանսգենդեր անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ սուտ մատնության հիմքով, որը այնուհետև կարճվել է: Նա պնդում է, որ իր նկատմամբ նման վերաբերմունքը պայմանավորված է իր գենդերային ինքնությամբ, ինչպես նաև առ այն, որ ոստիկանության բաժանմունքի աշխատակիցները գիտեն իր անձի և գործունեության վերաբերյալ, ինչն էլ հիմք է հանդիսացել քրեական գործն ի վնաս նրան լուծելու համար:

Մեկ այլ դեպքով՝ ոստիկանությունում անձը հայտնել է, որ պարտքով գումար է տվել իր ընկերոջը, սակայն վերջինս չի ցանկանում այն հետ վերադարձնել: Փաստերի բացակայության պատճառով նրա նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ նույն հիմքով: Անձը կարծում է, որ ոստիկանության նման վերաբերմունքը կապված է իր նույնասեռական լինելու հետ, ինչի մասին տեղյակ է ոստիկանությունը: Նրա համոզմամբ ոստիկանների՝ իր նկատմամբ տարբերակված վերաբերմունքն է քրեական գործ հարուցելու հիմքը:

1.4. Խոսքի ազատության իրավունք: Ատելության խոսքի արգելքը

Յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը:

Արգելվում է իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:

Հոդված 47, ՀՀ Սահմանադրություն

Խոսքի ազատությունը, որպես ժողովրդավարական հասարակության հիմնասյուներից մեկը, ներառում է արտահայտման գրեթե ցանկացած ձև ու բովանդակություն պարունակող խոսքը, ներառյալ անձի գենդերային ինքնությունն ազատորեն արտահայտելու իրավունքը, որն ընդգրկում է գաղափարներ, կարծիքներ և տեղեկատվություն անձի ինքնության վերաբերյալ[26]:

[26] հոդված 47, մաս 1, ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ընդունված 27.11.2005թ.
[27] Սմիթը և Գրեդին ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ թիվ 33985/96 և 33986/96 գործեր

Խոսքի ազատությունը բացարձակ իրավունք չէ և ենթակա է որոշակի սահմանափակումների[28]: Այն ներառում է գաղափարներ և կարծիքներ արտահայտելու ազատությունը, բայց միևնույն ժամանակ պարտականություն է սահմանում խուսափել անձի նկատմամբ այնպիսի արտահայտություններից, որոնք պարունակում են վիրավորանք այլ անձանց նկատմամբ, խախտում են նրանց իրավունքները[29]: Մասնավորապես, խոսքի ազատության իրավունքը չի ենթադրում ատելության խոսքի ազատություն[30]:

Ատելության խոսք է համարվում «...արտահայտման այն բոլոր դրսևորումները, որոնք տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում են ռասայական ատելությունը, քսենոֆոբիան, հակասեմիտիզմը կամ անհանդուրժողականությամբ պայմանավորված ատելության այլ դրսևորումներ, ներառյալ ագրեսիվ ազգայնականությամբ պայմանավորված անհանդուրժողականությունը, փոքրամասնությունների և այլ խմբերի նկատմամբ խտրականությունն ու թշնամանքը...»[31]:

ԼԳԲՏ անձանց նկատմամբ պետական պաշտոնյաների բացասական վերաբերմունքը

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Բաբուխանյանի հայտարարությունը

Ազգային ժողովում մեծամասնություն կազմող Հանրապետական խմբակցության անդամները ԱԺ ամբիոնից քննադատել են «2013 թ. ընթացքում մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» զեկույցն այն բանի համար, որ հաշվետվության մեջ անդրադարձ կա ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարման դեպքերին:

Հանրապետական (ՀՀԿ) խմբակցության պատգամավոր Հայկ Բաբուխանյանը Մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանին դատապարտել է ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների հետ համագործակցելու համար[32]: Նա իր խոսքում հիշատակել է Եվրատեսիլ 2014թ. հաղթող Կոնչիտա Վուրստին՝ ասելով, որ զզվում է նրանից.

---

[28] ՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն Թիվ 34
[29] Էրբականն ընդդեմ Թուրքիայի Թիվ 59405/00 ՄԻԵԴ վճիռ
[30] ՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն Թիվ 11
[31] Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի, հանձնարարական Թիվ R 97 «ատելության խոսքի» վերաբերյալ, ընդունված 30 հոկտեմբեր, 1997թ.
[32] ՀՀԿ-ական Հայկ Բաբուխանյանը ԱԺ-ում օմբուդսմենին քննադատեց Pink Armenia-ի հետ փոխըմբռնման հուշագիր ստորագրելու համար, http://goo.gl/Fwk3aE, 20.10.2014

«Մենք չենք կարող ձեզ աջակցել այնպիսի ոլորտներում, ինչպիսին, օրինակ, ձեր փոխըմբռնման հուշագիրն է նույնասեռական, երկսեռական, գենդերային անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում ներգրավված մի շարք կազմակերպությունների միջև, որը դուք կնքել եք 2011-ի հուլիսի 4-ին Ծաղկաձորում: Այդ կազմակերպությունները պարզապես հետապնդում էին երկու աղջնակի, որոնց անունն է Ինգա և Անուշ Արշակյաններ (երգչուհիներ, որոնք ընդգրկված էին Եվրատեսիլ 2014 Հայաստանի ազգային ժյուրիի կազմում: Նրանց հետ կապված դեպքը՝ ստորև), միայն այն բանի համար, որ վերջիններս իրենց թույլ տվեցին ասել, որ զզվում են Կոնչիտայից: Ես էլ եմ զզվում Կոնչիտայից», - հայտնել է Բաբուխանյանը:

2011-ի հուլիսի 4-ին Մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը փոխըմբռնման հուշագիր էր ստորագրել «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» հասարակական կազմակերպության նախագահ Մամիկոն Հովսեփյանի հետ: Հայկ Բաբուխանյանը նկատի ուներ այդ հուշագիրը:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վահրամ Բաղդասարյանի հայտարարությունը

ՀՀԿ-ական պատգամավոր Վահրամ Բաղդասարյանը Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցը քննադատելիս՝ իր խոսքում ևս հիշատակել է Կոնչիտա Վուրստին[33].

«Կրկին անգամ հորդորում եմ մեր բոլոր գործընկերներին, որ աշխատեն հայոց խորհրդարանի ամբիոնը չօգտագործել կոնչիտաներին գովերգելու համար», -հայտնել է Բաղդասարյանը:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հակոբ Հակոբյանի հարցազրույցը

ՀՀԿ-ական մեկ այլ պատգամավոր Հակոբ Հակոբյանը «7or.am» առցանց թերթին տված հարցազրույցում[34], մեկնաբանելով Եվրատեսիլում Կոնչիտայի ելույթը, կոչ է արել պայքարել նման երևույթների դեմ և մարդկային չարիք անվանել նրան.

«Այդ երևույթի դեմ պետք է հստակ կռվել ավելին, քան հիմա ենք անում: Կռվել օրենքի, բարոյական ուժով: Սա մարդու իրավունք չէ, սա մարդու իրավունքի խախտում է, սա մարդու արժեքի խախտում է», - ասել է Հակոբյանը:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Սահակյանի հարցազրույցը

Ազգային ժողովի պետահիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, Հայաստանի հանրապետական կուսակցության պատգամավոր Հովհաննես Սահակյանը, պատասխանելով «LGBTnews.am»-ի այն հարցին[35], թե նա ինչ վերաբերմունք ունի ԼԳԲՏ անձանց նկատմամբ, ասել է.

«Որպես Ազգային ժողովի պետահիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ՝ ես կարծում եմ, որ մեզ մոտ պետք է բոլոր մարդիկ պաշտպանված լինեն: Իսկ որպես հայ մարդ, ես մերժում եմ և չեմ ընդունում նմանատիպ դրսևորումները, որովհետև մենք փոքր ազգ ենք, մենք պատերազմող երկիր ենք, և այդ ամենն ազդում է մեր հասարակության թե՛ տրամադրության, թե՛ հետագա գործունեության վրա: Ձեզ նույնպես խորհուրդ կտամ ձեր քարոզչության միջոցով չխթանել նման տիպի երևույթների զարգացմանը»:

---

[33] Պատգամավորները շարունակում են իրենց ելույթներում հիշատակել Կոնչիտային. օմբուդսմենը պաշտպանվում է ՀԱԵ-ով, http://goo.gl/fiH9Yb, 21.10.2014

[34] ՀՀԿ-ականը Կոնչիտայի մասին. «Երբ ընկնում ես ագռավների երամի մեջ, պիտի կռկռաս», http://www.7or.am/am/news/view/68020/, 12.05.2014

[35] Աժ պետահիրավական հանձնաժողովի նախագահը երկատված մոտեցում ունի ԼԳԲՏ անձանց հանդեպ, http://goo.gl/1uuJYO, 05.11.2014

2. Մարդու իրավունքները պաշտպանելու պետության պարտականությունը

2.1 Կյանքի իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի[36]:

Հոդված 15, ՀՀ Սահմանադրություն

Կյանքի իրավունքը անձի հիմնարար իրավունք է՝ ամրագրված ՀՀ Սահմանադրությամբ: Կյանքի իրավունքը ենթադրում է յուրաքանչյուր անձի ապրելու անքակտելի իրավունքը: Այն ներառում է ավելի լայն իրավահարաբերություններ, քան անձի «կենդանի լինելու» իրավունքը, մասնավորապես ենթադրում է պետության պարտականությունը ձեռնարկելու հնարավոր անհրաժեշտ միջոցառումներ՝ կանխելու անձի կյանքի դեմ ուղղված կամայական ոտնձգությունները[37]: Պետությունը ոչ միայն չպետք է զերծ մնա անձի կյանքի իրավունքի իրացման ուղղակի միջամտությունից, այլև պետք է ստեղծի օրենսդրական գործուն մեխանիզմներ կյանքի դեմ ուղղված միջամտությունները կանխելու, ինչպես նաև պատշաճ քննություն ապահովելու համար[38]: Կյանքի իրավունքի միջամտություն կարող են համարվել նաև այն դեպքերը, երբ պետությունը չհակազդի անձի կյանքը անհարկի վտանգի տակ դնելու գործոնները[39], ինչը նշանակում է, որ խախտում կարող են համարվել նաև այն դեպքերը, երբ բացակայում է անձի մահվան փաստը, օրինակ՝ մահվան սպառնալիք[40]:

Սպառնալիքներ

ՓԻՆՔ Արմենիայի հոգեբանը սպառնալիքներ է ստացել իր այցելուներից մեկի ծնողից, երբ վերջինս զանգահարել է ու փորձել պարզել, թե ինչու է իր զավակն այցելում նրա մոտ: Պատասխան չստանալով՝ նա սպառնացել է հոգեբանին՝ ասելով, որ կգտնի նրան ու ընտանիքի անդամներին ու այնպես կանի, որ նրանց համար լավ չի լինի:

ՓԻՆՔ Արմենիայում դեպք է արձանագրվել, երբ անձը ստանում է կյանքին և առողջությանն ուղղված սպառնալիքներ, երբ ընկերոջ ընտանիքն իմացել է իրենց սեռական կողմնորոշման և փոխհարաբերությունների մասին:

Ատելության հիմքով հանցագործություն

Քանի որ պետությունը չի ստեղծում այնպիսի միջավայր, որտեղ հասարակությունը նորմալ կընդունի ԼԳԲՏ անձանց, այդ պատճառով նրանք թաքցնում են իրենց ինքնությունը, իսկ նրանց սեռական կողմնորոշումն օգտագործվում է նրանց իսկ դեմ: Շատ են լինում դեպքեր, երբ ԼԳԲՏ անձանց սպառնում են բացահայտել վերջիններիս սեռական ինքնությունը կամ բռնությունների ենթարկում՝ գումար, ապրանք շորթելու նպատակով:

---

[36] հոդված 15, ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ընդունված 27.11.2005թ.
[37] ՄԱԿ Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն Թիվ 6, ՔՔԻՄԴ հոդված 6 Կյանքի իրավունք
[38] Լ.Ս.Բ. ընդդեմ Միացյալ Թագավորության Թիվ 23413/94 ՄԻԵԴ վճիռ 09.06.1998թ., Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ վճիռ 28.10.1998թ.
[39] Լ.Ս.Բ. ընդդեմ Միացյալ Թագավորության Թիվ 23413/94 ՄԻԵԴ վճիռ §36, Բուդայեվան և այլոք ընդդեմ Ռուսաստանի Թիվ 15339/02, 21166/02, 20058/02, 11673/02 և 15343/02, ՄԻԵԴ վճիռներ, §146
[40] Բռանկո Տոմաշիչն և այլոք ընդդեմ Խորվաթիայի ՄԻԵԴ Թիվ 46598/06 վճիռ, Դինքն ընդդեմ Թուրքիայի Թիվ 2668/07 ՄԻԵԴ վճիռ

Օրինակ, ՓԻՆՔ Արմենիայում գրանցված դեպքի համաձայն, անձը հայտնել է, որ իրեն սպառնում են և փող են պահանջում սեռական կողմնորոշումը չբացահայտելու կապակցությամբ, ինչի առիթով վերջինիս մի խումբ տղամարդիկ զրկել են ազատությունից, պահել են ինչ-որ ավտոտնակում և վախեցրել զենքով և այլ զինամթերքով: Նա չի ցանկացել որևէ գործ սկսել իր անունով:

Կամ դեպք է գրանցվել, երբ անձը դիմել է իր նկատմամբ ֆիզիկական բռնության հետ կապված գործով: Իրեն անհայտ մարդիկ ծեծի են ենթարկել սեռական կողմնորոշումը պարզելու համար: Տուժողը չի ցանկացել դիմել ոստիկանություն, քանի որ չի ցանկանում, որպեսզի բացահայտվի իր նկատմամբ բռնություն կիրառելու շարժառիթը:

Մեկ այլ դեպքով՝ SUS (տղամարդ, ով սեռական հարաբերություն է ունենում տղամարդու հետ) անձը սոցիալական ցանցով ծանոթացել է տղամարդու հետ և հրավիրել իր տուն: Տղամարդը կապել է շահառուին և դանակով սպառնացել, այնուհետև վերցնելով համակարգիչը և հեռախոսը դիմել փախուստի: Կատարվածի համար հարուցվել է քրեական գործ: Քննչական մարմիններում տղամարդու կարգավիճակի վերաբերյալ իմանալուց հետո ցուցաբերվել է անտարբերություն:

«Ա Թի Վի»-ի հեռուստաթերում հնչած քրեական բնույթի մեղադրանքները

«Ա Թի Վի» հեռուստաընկերության Կիսաբաց լուսամուտներ հաղորդման ժամանակ Միացյալ երիտասարդական լիգայի համանախագահ Սևակ Հովհաննիսյանը հայտարարել է, որ երգիչ Հ. Հ.-ն բռնաբարել է 16-ամյա տղայի[41]: Հաղորդման ժամանակ նաև տեսանյութ է ցուցադրվել, որտեղ երևում է Հ.-ի դեմքը: Դեպքի առիթով քրեական գործ էր հարուցվել, սակայն Սևակ Հովհաննիսյանի ապացույցների բացակայության պատճառով գործը կարճվել է: Հ.-ն պատմում է, որ Հովհաննիսյանի արած հայտարարությունից հետո կտրուկ վատացել է իր և իր ընտանիքի, մասնավորապես հոր, մոր և քրոջ առողջությունը: Նրան հեռացրել են աշխատանքից, սակայն երբ քրեական գործը կարճվել է, Հ.-ի փաստաբանի պահանջով աշխատանքը վերականգնել են: Այնուամենայնիվ նա ստիպված է եղել նորից դուրս գալ աշխատանքից առողջական խնդիրների պատճառով: Հ.-ն պատմում է, որ փողոցում նրան փորձել են ծեծել, տան մուտքի մոտ նամակներ են գցել, նա մի քանի ամիս չի կարողացել դուրս գալ տանից՝ վախենալով իր կյանքին հասվող սպառնալիքներից: Հ.-ն Հովհաննիսյանի դեմ դատական հայց է ներկայացրել՝ պատիվն ու արժանապատվությունը վիրավորելու մեղադրանքով: «Ա Թի Վի» հեռուստաընկերությունը գործում ներգրավված է որպես 3-րդ կողմ:

ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունքն իրենց ընտանիքներում

ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունքը խիստ բացասական է լինում նաև իրենց ընտանիքներում: 2014թ. ՓԻՆՔ Արմենիայում 6 դեպք է գրանցվել, երբ անձի հետ բնակվող ծնողները կամ ազգականները, իմանալով նրա նույնասեռական լինելու մասին, դուրս են հանել տանից:

2.2. Խոսքի ազատության իրավունք: Ատելության խոսքի արգելքը: Խտրականությունից զերծ մնալու իրավունք

Ատելություն և անհանդուրժողականություն պարունակող խոսքի արգելքը ենթադրում է ոչ միայն պետության կողմից նման խոսքի տարածման արգելքը, այլև պարտականություն ձեռնարկելու համապատասխան միջոցներ, որպեսզի նման խոսքը երրորդ անձանց կողմից չխրախուսվի[42]: Այս առիթով պետության պարտականությունն է

[41] Կիսաբաց լուսամուտներ, Ա Թի Վի հեռուստաընկերություն, https://youtu.be/t4-M2M0YHD8, 06.05.2014
[42] Օզգուր Գյունդեմն ընդդեմ Թուրքիայի Թիվ 23144/93 ՄԻԵԴ վճիռ

ձեռնարկել օրենսդրական և այլ միջոցառումներ կանխելու անձանց նկատմամբ անհանդուրժողականության և ատելության որոշակի հարթակներում, որոշակի ձևերով և բովանդակությամբ սերմանումը:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, 2013թ. ելույթ ունենալով Եվրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովում, Եվրոխորհրդին կոչ էր արել ատելության խոսքի ու դրսևորումների դեմ պայքար ձեռնարկել: ՀՀ նախագահի խոսքի համատեքստում ազգամիջյան ատելությունն էր, բայց Եվրոխորհրդի նախարարների կոմիտեի թիվ 97(20) հանձնարարականում ատելության քարոզն այսպես է սահմանվում. «Ատելության քարոզում» եզրույթը պետք է հասկանալ որպես արտահայտման բոլոր ձևերն ընդգրկող երևույթ, որը տարածում է, հրահրում է, խրախուսում կամ արդարացնում է ռասայական ատելությունը, այլատյացությունը, անտիսեմիտիզմը և ատելության այլ ձևերը, որոնք հիմնված են անհանդուրժողականության վրա, այդ թվում՝ ագրեսիվ ազգայնականությամբ և ազգակենտրոնությամբ արտահայտված անհանդուրժողականությունը, փոքրամասնությունների, ներգաղթյալների և գաղթական ծագման անձանց նկատմամբ խտրականությունը և թշնամանքը:

Այսինքն, ատելության քարոզն այն է, երբ հակակրանքի դրսևորումներն ուղղվում են անձի կան անձանց խմբի նկատմամբ, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց:

Հայկական հեռուստաեթերում ատելության քարոզը սովորական երևույթ է. հեռուստաաստղերը, հաղորդավարներն ու լրագրողները ԼԳԲՏ անձանց նկատմամբ իրենց հակակրանքը ցուցադրում են առանց վարանելու ու հոմոֆոբ ներկայանում պարծանքով:

«X Factor» հեռուստամրցույթի մասնակից Սևակ Կիրակոսյանի դեպքը

2014թ. մայիսի 17-ին Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրը «Շանթ» հեռուստակայանով «X Factor» երաժշտական հեռուստամրցույթի մասնակից Սևակ Կիրակոսյանն իր ելույթը նվիրեց հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի զոհերին, ինչին հետևեց ժյուրիի անդամների հակակրական արտահայտությունները[43]: Ժյուրիի անդամ Էմմա Բեջանյանն (Էմմի) ասաց. «Տեսա՞ր, ես ճիշտ էի, ես իրան Յութուբով տեսել եմ, ինքը միտինգների էր գնում գեյերի», մյուս անդամ Անդրեյ Հովնանյանը (Անդրեն) արձագանքեց. «Կոնչիտա, էս ինչ արիր երկրիս հետ», մեկ այլ անդամ՝ Գարիկ Պապոյանն ասաց. «Դուխը նայեք, նագլիությունը», ինչին Անդրեն պատասխանեց. «Հա բա, պիտի վատ խոսաս, դրել եք բան բարի»: Բացի այդ հանդիսատեսի սիրողական տեսախցիկով արված ձայնագրության մեջ երևում են եթերից դուրս մնացած հատվածներ, որտեղ հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի զոհերին ելույթը նվիրելուց հետո հնչում է Գարիկ Պապոյանի խոսքը[44]. «Ես էլ եմ միանում այդ պայքարին, բայց հոմոֆոբների կողմից»: Սևակ Կիրակոսյանը հարցնում է, թե արդյոք նա բռնության կողմնակից է, Պապոյանը պատասխանում է. «այո, այո»: «Շանթ» հեռուստաընկերության կայքում «X Factor» հաղորդման չորրորդ ժյուրիի՝ Եգոր Գլումովի, ինքնակենսագրականում նշված է, որ նա «воинствующий гомофоб» (մարտնչող հոմոֆոբ) է[45]:

Վերը նշված տեսանյութը համացանցում հայտնվելուց հետո, բազմաթիվ օգտատերեր Սևակ Կիրակոսյանի հասցեին վիրավորական արտահայտություններ հնչեցրին՝ ընդհուպ մինչև Հայաստանում ամենավիրավորական համարվող հայհոյանքներ: Օգտատերերը նաև «Շանթ» հեռուստաընկերությանը մեղադրում էին «նույնասեռականության քարոզչություն թույլ տալու» մեջ:

---

[43] X-Factor 3 – լսումներ 08 - ՍևակԿիրակոսյան, Շանթ հեռուստաընկերություն, https://youtu.be/bIQO3R6qFMI, 14 .06.2014
[44] Գնացինք, Սևակ Կիրակոսյանի ֆիլմը, https://youtu.be/skIC2YcF_4o
[45] Ժյուրի Եգոր Գլումով, http://x-factor.shanttv.com/juri/view/glumov.html

«sarkavagagirq.net» կայքը Սևակ Կիրակոսյանի դեմ նյութ էր հրապարակել, որտեղ տեղադրել էր նրա նկարը «Wanted dead or alive» (Փնտրվում է՝ մահացած կամ ողջ) գրությամբ[46]:

Երգիչ Արամ mp3 հայտարարությունները

2014թ. Եվրատեսիլի Հայաստանի մասնակից Արամ Սարգսյանը (Արամ Mp3) Հանրային հեռուստատեսության եթերում, պատասխանելով հաղորդավարի հարցին՝ «ո՞նց ես նայում մորուքավոր կին մասնակցի կողմնորոշմանը (նկատի ունենալով Ավստրիացի մասնակից Կոնչիտա Վուրստին)», Արամ Mp3-ը պատասխանել էր. «Ոչ նորմալ, ոչ ադեկվատ: Բայց ինձ թվում ա, մենք կկարողանանք նենց անենք, որ ինքը կողմնորոշվի տղա ա, թե աղջիկ»[47]: Այնուհետև մամուլի ասուլիսի ժամանակ, Արամ Mp3-ը ասել էր, որ իրենց համար Վուրստի հետ նույն բեմում հայտնվելը բավական ծանր է. «Որովհետև երբ հասնում եմ Կոմայգի (այգու շրջակայքում գիշերը կանգնում են տրանսվեստիտները) մի փոքր արագացնում եմ մեքենայիս արագությունը, այս դեպքում պետք է հոգեբանական այս խնդիրը հաղթահարել»[48]:

Ազատություն ռադիոկայանի ֆեյսբուքի ասուլիսի ժամանակ Արամը պնդեց, որ կատակ է արել, սակայն խոստովանեց, որ նման երևույթներ չի ընդունում[49]: «Ես կատակով պատասխանեցի՝ ինձ դժվար է լինելու բեմ բարձրանալ իր հետ: Անկեղծ պատասխանել եմ: Ինձ դժվար կլինի, որովհետև ես այդ կյանքով չեմ ապրում և միևնույն է, որքան էլ առաջ է գնացել աշխարհը կամ հակառակը՝ հետ է գնացել աշխարհը, ինձ համար դա անընդունելի թեմա է»:

Դանիայում Արամը հարցազրույցներում ափսոսանք է հայտնել իր արարքի համար, սակայն Հայաստան վերադառնալուց հետո նախագծին մասնակցող Հայաստանի մեկ այլ ներկայացուցիչ՝ Գարիկ Պապոյանը News.am-ին տված հարցազրույցում ասել է, որ Դանիայում «քյառթուների» կարիքը զգացվեց, երբ այնտեղ միջին սեռի բաներ հայտնվեցին[50]:

Երգչուհիներ Ինգա և Անուշ Արշակյանների հայտարարությունները

Եվրատեսիլ 2014թ. Հայաստանի ազգային ժյուրիի անդամներ Ինգա և Անուշ Արշակյան քույրերը Aravot.am-ին տված հարցազրույցում ասել էին, որ իրենք Ավստրիայի ներկայացուցիչ Կոնչիտա Վուրստին ամենացածր գնահատականն էին տվել՝ ներքին հակակրանքից դրդված[51]. «Նա միայն հակակրանք էր առաջացնում: Եվ ես ապշած եմ, որ sms քվեարկությամբ 2-րդ տեղ են տվել Կոնչիտային: Ես չգիտեմ, թե ովքեր են քվեարկողները եղել, բայց ես չեմ կարծում, որ մեր ամբողջ ժողովուրդը միահամուռ քվեարկել է Կոնչիտայի օգտին (…) Ինչպես հոգեկան հիվանդն է հակակրանք առաջացնում, այնպես էլ նման երևույթները», - ասել է Արշակյանը:

Լրագրող Հռիփսիմե Ջեբեջյանը նաև նշել է, որ երբ Ինգա և Անուշ Արշակյաններին Կոնչիտայի մասին հարց տվեցին, նրանք դեմքի արտահայտությունը միանգամից փոխեցին և զզվանքով ձեռքերով խաչ արեցին:

---

[46] «Նվիրվում է հոմոֆոբիայի զոհերին», http://www.sarkavagagirq.net/2014/06/homofobia.html, 17.06.2014
[47] Արի ու տես, Հանրային հեռուստաընկերություն, https://youtu.be/ima2kNhoVDs, 05.01.2014
[48] Արամ MP3-ն տրանսվեստիտ մասնակցի մասին, https://youtu.be/4rLpY2qw3gg
[49] Ֆեյսբուքյան ասուլիս Արամ MP3-ի հետ, Ազատություն Ռադիոկայան, https://youtu.be/9muAEb4BK6k, 21.03.2014
[50] Գարիկ Պապոյան. «Քյառթու» մտածողությունը սկսեցի կարոտել «Եվրատեսիլ»-ում, երբ հայտնվեց միջին սեռի երեւույթը», http://goo.gl/JbvdQB, 13.052014
[51] Անուշ Արշակյանը զզվում է Կոնչիտայից. «Նրան վերջին տեղերում եմ դրել՝ ներքին հակակրանքից դրդված» , http://www.aravot.am/2014/05/14/460287/, 14.05.2014

Նույն օրն ավելի ուշ «Կենտրոն» հեռուստաալիքի եթերում նրանք հերքել են, որ նման բան են ասել՝ պնդելով, որ լրագրողը աղավաղել ու խեղաթյուրել է նրանց ասածը:

Դրանից հետո Aravot.am-ը հրապարակել է հարցազրույցի ձայնագրությունը, որն ապացուցել է լրագրողի հրապարակած հոդվածի իսկությունը:

Ավելի ուշ Ազատություն ռադիոկայանով քույրերի հետ կայացած Ֆեյսբուքյան մամուլի ասուլիսի ժամանակ Անուշ Արշակյանը՝ ներողություն խնդրելով ասել է[52]. «Իմ ամբողջ նեգատիվ գնահատականը միայն ու միայն վերաբերում էր Կոնչիտա Վուրստի կերպարին (…) Եվ եթե ինչ-որ մարդիկ վիրավորվել են այն բանից, թե ինչ է հնչել՝ համարելով, որ նրանց եմ վիրավորել, ես ներողություն եմ խնդրում, միտք չունեի վիրավորել ո՛չ տրանսվեստիտներին, ո՛չ սեռական փոքրամասնություններին, ո՛չ էլ առավել ևս հոգեկան հիվանդ մարդկանց»:

Քաղաքական գործիչ Ռոբերտ Ահարոնյան արտահայտությունները

ՀՀ նախագահի 2013թ. ընտրություններում իր թեկնածությունն առաջադրած, սակայն գրավը չմուծելու պատճառով պայքարից դուրս մնացած Հայաստանի սոցիալիստական շարժման ղեկավար Ռոբերտ Ահարոնյանը մայիսին Գավառի դատարանի մոտ ակտիվիստներին, որոնք եկել էին ընտանեկան բռնության զոհ դարձած կնոջն աջակցելու, կարգադրել է հեռանալ երկրից՝ ասելով. «սիկտիր եղեք ձեր երկիրը: Խի՞ եք էկել Հայաստան խանգարելու», այնուհետև նաև ասել է. «Հզոր ընտանիքի կողմնակից եմ, ոչ թե գյոթերի»[53]:

Հասարակական գործիչ Խաչիկ Ստամբոլցյանի մամուլի ասուլիսը

Հասարակական-քաղաքական գործիչ Խաչիկ Ստամբոլցյանն 2014թ. հունվարի 30-ին ֆոտոլրագրող Նազիկ Արմենակյանի «Մենակության շտամպը» տրանսվիստիտների մասին պատմող լուսանկարչական գրքի դեմ մամուլի ասուլիս էր հրավիրել՝ կոչ անելով դատապարտել գրքի հեղինակներին, իսկ գիրքն անմիջապես հանել վաճառքից[54]:

2.3 Օրենքի առջև հավասարության և հավասար պաշտպանվածության իրավունք

Հավասարության իրավունքի պաշտպանությունը ենթադրում է ոչ միայն պետության կողմից ուղղակի միջամտության արգելքը, այլև վերջինիս պարտավորությունը պաշտպանելու երրորդ անձանց կողմից հնարավոր միջամտությունից: Պետության կողմից նման միջամտության հանդուրժումն անթույլատրելի է, քանի որ այն կնշանակի, որ որոշ փոքրամասնությունների նկատմամբ նախապաշարմունքն ու խտրականությունն արդարացված է և ընդունելի[55]: Այս իրավունքի պատշաճ իրականացումը նշանակում է պետության կողմից անհրաժեշտ օրենսդրական, վարչական և այլ միջոցառումներ իրականացնելու պարտականությունը, որոնք կապահովեն անձանց՝ օրենքի առջև և փաստացի հավասարությունը[56]: Ավելին, հավասարության սկզբունքի ապահովումը չի նշանակում բոլորի նկատմամբ նույնանման վերաբերմունք նույնանման պայմաններում, այլև նշանակում է նաև պետության կողմից կառուցողական գործողությունների նախատեսում այն դեպքերում, երբ անհրաժեշտ է վերացնել կամ նվազեցնել այս կամ այն խմբի նկատմամբ խտրականություն ծնող կամ խթանող պայմանները[57]:

[52] Ֆեյսբուքյան ասուլիս Ինգա և Անուշ Արշակյանների հետ, Ազատություն ռադիոկայան, https://youtu.be/Jh4LkrSgidA, 16.03.2014
[53] Սիկտիր եղեք ձեր երկիրը. Ռոբերտ Ահարոնյան, https://youtu.be/p-i_APkXmlc
[54] «Մենակության շտամպը» նույնասեռականություն է քարոզում, հեղինակներին էլ պետք է դատապարտել» Խաչիկ Ստամբոլցյան, http://goo.gl/uhr8iV, 30.01.2014
[55] Եհովայի վկաների Գլդանի Միաբանությունն ընդդեմ Վրաստանի Թիվ 71156/01 ՄԻԵԴ վճիռ, §141
[56] ՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն 18, մաս 6
[57] ՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն 18, մաս 10

«Իրավունք» թերթի դեմ դատավարությունը

Ինգա և Անուշ Արշակյանների Ազատություն ռադիոկայանի ֆեյսբուքյան ասուլիսից հետո «Իրավունք» թերթը հրապարակեց «Նրանք սպասարկում են միջազգային համասեռամոլ լոբբինգի շահերը. ազգի թշնամիների սև ցուցակը» վերնագրով հոդված[58]: Թերթի խմբագիր Հովհաննես Գալաջյանի անունով ստորագրված նյութում ներկայացված է 60 հոգու անուններից բաղկացած ցուցակ՝ նրանց ֆեյսբուքի արտաքին հղումներով ու կոչ է արվում չբարևել ու չշփվել այդ մարդկանց հետ, «0 անհանդուրժողականություն» ցուցաբերել, աշխատանքի չընդունել, ինչպես նաև նրանց կոչել են ազգի և պետության թշնամի և զոմբի: Ցանկում ընդգրկված մի քանիսը «Իրավունք»-ից հերքում էին պահանջել: Սակայն թերթը հերքման փոխարեն մեկ այլ նյութ տեղադրեց՝ «Ու սրանք դեռ համարձակվում են հերքո՞ւմ պահանջել» վերնագրով՝ շարունակելով վիրավորական արտահայտություններ տեղալ[59]: Նյութի տակ տեղադրված է նաև գեյերին վիրավորող «antiVirus» հաղորդման «Գոմիկների մասին» կոչվող տեսանյութը :

Ցանկում ներառված 16 քաղաքացիներ «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ի և Հովհաննես Գալաջյանի դեմ միասնական դատական հայց էին ներկայացրել՝ իրենց արժանապատվությունն ու պատիվը վիրավորելու համար: Դատարանի վճռի հրապարակումից օրեր առաջ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը 2014թ. հոկտեմբերի 25-ին մասնակցել է «Իրավունք» թերթի 25-ամյակին նվիրված միջոցառմանը, որի ժամանակ Հայաստանի հանրապետական խմբակցության պատգամավոր, «Իրավունք» թերթի խմբագրական խորհրդի նախագահ Հայկ Բաբուխանյանին Մովսես Խորենացու մեդալ է շնորհել, իսկ Հովհաննես Գալաջյանն ու թերթի տնօրեն Գեղամ Գրիգորյանին Երախտագիտության մեդալով են պարգևատրվել[60]:

Հինգ օր անց՝ 2014թ. հոկտեմբերի 30-ին, Կենտրոն և Նորք - Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը մերժել է 16 քաղաքացիների հայցը և հայցվորներին պարտավորեցրել 150 հազար դրամ գումար վճարել թերթին՝ փաստաբանական ծառայությունների փոխհատուցման համար, և նույնքան գումար բռնագանձել հօգուտ Հովհաննես Գալաջյանի:

Նույն հոդվածի առիթով «Իրավունք» թերթին առանձին հայցերով դատի են տվել «Նոր սերունդ» հասարակական կազմակերպության աշխատակիցները և Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Ռոմիկ Դանիալը:

«Նոր սերունդ» կազմակերպությունը որպես հայցվոր նաև ներգրավված է «Իրավունք» թերթի դեմ մեկ այլ դատական գործում՝ «Երբ համասեռամոլների գրանտածիծ պաշտպանները պետական աջակցություն են ստանում» վերնագրված հոդվածի համար[61]:

---

[58] Նրանք սպասարկում են միջազգային համասեռամոլ լոբբինգի շահերը. ազգի թշնամիների սև ցուցակը, http://goo.gl/ivub1H, 17.05.2014
[59] Ու սրանք դեռ համարձակվում են հերքո՞ւմ պահանջել, http://goo.gl/NNU7WC, 03.06.2015
[60] ՀՀ նախագահը ներկա է գտնվել «Իրավունք» թերթի 25-ամյակին նվիրված միջոցառմանը, http://armenpress.am/arm/news/781479/, 25.10.2014
[61] Երբ համասեռամոլների գրանտածիծ պաշտպանները պետական աջակցություն են ստանում, https://ngngo.files.wordpress.com/2014/06/iravunq.jpg, «Իրավունք» թերթ N62

3. Անձի իրավունքների իրականացումն ապահովելու, ապահով միջավայր ստեղծելու պետության պարտականությունը

Հասարակության չափազանց բացասական վերաբերմունքն ակնառու է ՀՀ Սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ հետազոտության մեջ[62], որն իրականացրել է «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» (APR Group) ՀԿ-ն՝ «Հայաստանի քաղաքական գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացում» ծրագրի շրջանակներում: Հարցման համաձայն՝ բնակչության զգալի մեծամասնությունը նոր սահմանադրությունում կցանկանար, որ սեռական փոքրամասնությունների իրավունքները սահմանափակվեին: Սեռական փոքրամասնությունների իրավունքները սահամանափակելուն կողմ է արտահայտվել հարցվածների 88%-ը, ոչինչ չփոխելուն՝ 8%-ը, իսկ ավելի շատ իրավունքներ և արտոնություններ տալուն՝ 1%-ը:

Այդուհանդերձ որոշ տեղերում հնարավոր է նկատել ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ որոշակի հանդուրժողականություն: Հելսինկյան Ասոցիացիայի և Անկախ լրագրողների ցանցի համատեղ իրականացրած «Խոսքի ազատություն. 10 հարց 10 խմբագրի» ծրագրի շրջանակներում լրատվամիջոցների խմբագիրներին հարցրել էին, թե արդյոնք նրանք դեմ են հոմոֆոբիային: Հարցմանը մասնակցել են «Epress.am»-ի, «168.am»-ի, «iLur.am»-ի, «1in.am»-ի, «Առավոտ»-ի, «Հայկական ժամանակ»-ի, «Lragir.am»-ի, «Հրապարակ»-ի և «Hetq.am»-ի խմբագիրները[63]:

Նրանցից 7-ը միանշանակ պատասխանել են, որ դեմ են հոմոֆոբիային: «168.am»-ի խմբագիր Սաթիկ Սեյրանյանն ասել է, որ դա շատ անձնական է, իսկ «Հայկական ժամանակ» թերթի խմբագիր Հայկ Գևորգյանը նշել է, որ անտարբեր է:

Հաղորդաշարին մասնակցելու հրավեր ստացած «tert.am»-ի խմբագիր Սուրեն Խաչատրյանը նախ խնդրել է ծանոթանալ հարցմանը՝ «ղեկավարության» հետ համաձայնեցնելու համար, ծանոթանալուց հետո հրաժարվել է պատասխանել հարցերին:



Պետական ապարատից 2014թ. միայն մեկ մարդ է աջակցություն հայտնել ԼԳԲՏ մարդկանց: Հայաստանի Արտաքին գործերի նախարարության միջազգային վարչության պետ Վահրամ Կաժոյանը սեպտեմբերին հրապարակայնորեն աջակցել է հոմոֆոբիայի դեմ ուղղված ՄԱԿ-ի «Ազատ և հավասար» նախաձեռնությանը՝ Ֆեյսբուքում հրապարակելով իր նկարը, որտեղ նրա ձեռքին է «Ո՛չ հոմոֆոբիային. ատելությունն ընտանեկան արժեք չէ» գրությամբ ցուցանակը[64]: Այս դեպքը անարձագանք չի թողել «Իրավունք» թերթը՝ պարզաբանումներ պահանջելով ՀՀ ԱԳՆ-ից[65]:

[62] Սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ հասարակական կարծիքի ուսումնասիրության արդյունքներ, http://goo.gl/taMJ7k, էջ 11
[63] Խոսքի ազատություն-10 հարց 10 խմբագրի Ֆիլմ 8-րդ, https://youtu.be/e5aMZ3JqQxU
[64] Ո՛չ հոմոֆոբիային. Վահրամ Կաժոյանի միացել է ՄԱԿ-ի նախաձեռնությանը, http://www.1in.am/1438570.html, 26.092014
[65] Պետական պաշտոնյան՝ համասեռամոլության լոբբի՞ստ, http://goo.gl/jcrPxh, 28.01.2015

Եզրակացություն

Հանրության կարծիքը ԼԳԲՏ անձանց նկատմամբ շարունակում է չափազանց բացասական մնալ: Այդ կարծիքի ձևավորմանն ու խորացմանը նպաստում են պետական այրերը:

ԼԳԲՏ անձինք, ինչպես նախորդ տարիներում, այնպես էլ 2014 թվականի ընթացքում խտրականության են ենթարկվել կյանքի գրեթե բոլոր ոլորտներում:

Անպատժելիության այս մթնոլորտի ամրապնդմանը մեծապես նպաստում է նաև գործող օրենսդրական դաշտի անկատարությունը, մասնավորապես՝ գործող իրավական նորմերի ԼԳԲՏ անձանց նկատմամբ կիրառելի չճանաչվելու հանգամանքը, ինչպես նաև օրենսդրական այնպիսի կարգավորումների բացակայությունը, ինչպիսիք են՝ անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքը, անձի սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունը պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք չնախատեսելը, ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության խոսքի օրենսդրական արգելքի բացակայությունը:

ԼԳԲՏ անձանց դեմ խոսելը պատվաբեր գործ է համարվում ու դիտարկվում է որպես հայրենասիրության չափանիշ, իսկ ովքեր փորձում են պաշտպանել նրանց իրավունքները, նույնպես թիրախավորվում են: ԼԳԲՏ անձանց նկատմամբ բռնությունները, ատելության կոչերը, սպառնալիքները ազգապահպան գաղափարախոսության մասն են կազմում: Դեռևս մեծ է վտանգը Հայաստանում, որպեսզի մարդիկ կարողանան ազատ խոսել իրենց սեռական կոմնորոշման մասին ու այն բացասաբար չանդրադառնա իրենց ճակատագրի վրա:

Առաջարկություններ

Պետական մարմիններին՝

- Դադարեցնել պետական մարմինների ներկայացուցիչների կողմից ԼԳԲՏ անձանց վիրավորող, նրանց նկատմամբ ատելությունը և խտրականություն սերմանող հայտարարությունները: Ձեռնարկել համապատասխան միջոցներ պետական մարմինների ներկայացուցիչների կողմից ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքը կանխելու, իսկ տեղի ունեցած դեպքերում՝ այդ անձանց պատասխանատվության ենթարկելու առիթով:
- Ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն իրականացնել ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների առիթով՝ բացառելով քննություն իրականացնող մարմիններում ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական, կանխակալ վերաբերմունքը և դադարեցնելով ԼԳԲՏ անձանց դիմումների դեպքում գործը ի վնաս տուժողի լուծելու արատավոր պրակտիկան:
- Ձեռնարկել համապատասխան միջոցներ փակ հաստատություններում ԼԳԲՏ անձանց անվտանգությունն ապահովելու, դաժան և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերը կանխելու, իսկ նման դեպքերում՝ պատշաճ քննություն իրականացնելու համար:
- Ձեռնարկել համապատասխան միջոցներ պետական մարմիններում ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքը կանխելու համար, այդ թվում ոստիկանության և դատախազության մարմիններում ծառայողների, դատավորների վերապատրաստումների, իրազեկումների և այլ միջոցներով:
- Ընդունել խտրականությունը կանխարգելող, ինչպես նաև արգելող՝ քաղաքացիական, վարչական և քրեական պատասխանատվություն սահմանող առանձին համապարփակ օրենսդրություն, որը կապահովի խտրականությունից պաշտպանված լինելու անձի իրավունքը նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով:
- Վերանայել ատելության խոսքն արգելող ՀՀ օրենսդրությունը, սահմանել «ատելության խոսք» հասկացությունը, պատասխանատվություն սահմանել որոշակի հատկանիշներով օժտված անձանց, ներառյալ ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքի արգելքը:
- Վերանայել ատելության հիմքով հանցագործություններն արգելող ՀՀ օրենսդրությունը, մասնավորապես նախատեսել անձի նկատմամբ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունը՝ որպես քրեական պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարներ պետական մարմինների ծառայողների, մասնավորապես ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, ՀՀ Կառավարության ներկայացուցիչների և պաշտոնատար այլ անձանց շրջանում:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարները հասարակությունում, մասնավորապես հրապարակայնորեն հանդես գալ հանդուրժողականություն սերմանող հայտարարություններով՝ ճանաչելով ԼԳԲՏ անձանց հասարակության լիիրավ անդամներ և քաղաքացիներ լինելու փաստը:

Զանգվածային լրատվության միջոցներին՝

- Դադարեցնել ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն և անհանդուրժողականություն սերմանող հրատարակումները՝ հասարակությանը մատուցելով գրագետ, էթիկապես ընդունելի և ԼԳԲՏ մարդու իրավունքների նկատմամբ հարգանք սերմանող հրատարակումներ:
- Չշահարկել ԼԳԲՏ անձանց առնչվող ցանկացած թեմա՝ զերծ մնալով հասարակության մեջ անհարկի անհանդուրժողականություն և ատելություն սերմանելուց:

Միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին՝

- Պատշաճ կերպով վերահսկել Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած ԼԳԲՏ անձանց իրավունքների վերաբերյալ միջազգային պարտավորությունների կատարման գործընթացը:
- Հանդես գալ պաշտոնական հայտարարություններով՝ ի աջակցումն ՀՀ-ում ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության կարևորության և առաջնայնության:
- Մարդու իրավունքներին առնչվող իրենց զեկույցներում անդրադառնալ սույն զեկույցում բարձրացված ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների ձևավորված պրակտիկային:

Լուսանկարների հեղինակներ՝

Անի Թադևոսյան (կազմի վրա)
Մարկուս Ջ.Բ. (էջ 2)
Civilnet.am (էջ 8)
Aravot.am (էջ 15)
«Ազատ և հավասար», ՄԱԿ (էջ 16)
«Փեղկ» (էջ 19)

Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ

էլ-փոստ՝ info@pinkarmenia.org
հեռախոս՝ +374 60 377277

www.pinkarmenia.org